Աբովյանի համայնքապետարան

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Պայմանագիր № ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-26/64

Գիրք 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ ԵՎ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Երևան 2026

HEA
ENGINEERING & DESIGN

Պայմանագիր <u>№ ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-26/64</u>

<u>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ</u>

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գիրք 1 *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ ԵՎ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ*

Տնօրեն Է. Հոդաբաշյան

Նախագծի գլխավոր ինժեներ Է. Հոդաբաշյան

HEA
ENGINEERING & DESIGN

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ
Գծագրական մաս և ծավալաթերթ

Գիրք 2 - Նախահաշիվ

ԳԻՐՔ – 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

- Պահանջվող լիցենզիա և լիցենզիաի ներդիրներ
- Տեխնիկական առաջադրանք
- «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված ՎՋ 3962/2024 տեխնիկական պայման
- Համայնքի ղեկավարին ուղված ԷՀ-27 գրություն
- Էլեկտրոնային հարթակով շահագրգիռ կազմակերպությունների կողմից ստացված համաձայնություններ
- ՀՀ Կոտայքի մարզի, Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում քաղաքային այգու համար կառուցվող ջրագծի և կոյուղագծի ուղեգծերի ինժեներաերկրաբանական պայմաններ
- Նյութերի և կոնստրուկցիաների երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջներ

Բացատրական մաս

- Աշխատամքային նախագծի բացատրագիր, աշխատանքների կազմակերպան ընդհանուր դրույթներ և օրացուցային գրաֆիկ

Ծավալաթերթ

- Աշխատանքային ծավալներ

Գծագրական մաս

- Դիտարկվող տարածքի տեղադիրքային հատակագիծ Մ 1:5000, ընդհանուր տվյալներ
- Նախագծվող ջրագծի, կոյուղագծի և հակահրդեհային հիդրանտի հորի գլխավոր հատակագիծ Մ 1:1000
- Նախագծվող ջրագծի խրամուղու լայնական կտրվածք, հակահրդեհային հիդրանտի հորի հատակագիծ և կտրվածք Մ 1:20
- Նախագծվող ջրաչափական հանգույցի հատակագիծ, կտրվածք Մ 1:10, խրամուղու լայնական կտրվածք և մասնագրեր
- Պոլիմերավազային ջրաչափական հորի չափագրական գծագրեր և տեխնիկական ցուցանիշների աղյուսակ
- Նախագծվող կոյուղու կոլեկտոր $Կ_{1-2}$-ի երկայնական և լայնական կտրվածքներ, միացման հանգույցի հատակագիծ և մասնագրեր
- Ջրամատակարարման ե/բ կլոր հոր D=1.5 մ, $Н_{հաշվ}$=1.8 մ
- Հիդրանտի հորի ծածկի սալի հատակագիծ: Հիդրանտի հորի ծածկի սալի ամրանավորում: Մասնագիր
- Ջրահեռացման Ե/Բ դիտահոր D=1.0 մ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000280, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-21, «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ, ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ. 1 ՆՐԲ., 24

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG3D-F1C8-C4A4-85B2**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000280-08

(ներդիրի սերիան, համարը)

«ԷՅԶ-Ի-ԷՅ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ (ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՄԵԼՈՐԱՑԻԱ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

21.08.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝ 21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG5E-1232-F955-DD91**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Հավելված N 1
2026 թ. կնքված
«ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-26/64» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու ջրամիացման, ջրահեռացման և հրդեհաշիջման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հասցե	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	Կատարման ժամկետը
1	71241200	*Իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու ջրամիացման, ջրահեռացման և հրդեհաշիջման համակարգերի կառուցման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ՝ ինքնուրույն ձևավորելով անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքը, նախապես ուսումնասիրելով տեղանքը, կառուցվող այգու համար անհրաժեշտ ջրաքանակը, հնարավոր միացման կետերը, տեխնիկական պայմանները և այլ անհրաժեշտ ելակետային տվյալները։* *Աշխատանքային նախագիծը կազմվում է գործող նորմատիվ իրավական ակտերի և քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան։* *Նախահաշիվը կազմվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան։* *Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրատուին ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ։* *Նախատեսվում է հեղինակային հսկողություն, և նախագծողը պարտավոր է հեղինակային հսկողություն իրականացնել աշխատանքների կատարման ողջ ընթացքում, ընդ որում վերահսկել բոլոր ծածկված աշխատանքների կատարման ընթացքում հավաստագրված և համապատասխան որակավորում ունեցող մասնագետի ներկայությամբ տեղամասում իրականացնելով մշտադիտարկում, անկախ ծածկված աշխատանքների անընդհատության հանգամանքից, իրականացնել նաև*	Աբովյան համայնք	դրամ	1	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ

		աջակցություն և խորհրդատվություն շին աշխատանքների ընթացքում, լրամշակել նախագծանախահաշվային փաստաթղթերը ըստ անհրաժեշտության առավելագույնը եռօրյա ժամկետում, վերջինիս չիրականացման կամ թերի իրականացման դեպքում սահմանվում է տույժ պայմանագրի գնի հինգ տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար։ *Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման պահանջներին համապատասխան նախագծողը պարտավոր է՝* *ա) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,* *բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի, այդ թվում՝ կոնստրուկցիաների, ինչպես նաև օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,* *գ) ներկայացնել շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիաներին, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,* *դ) նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրատուին ներկայացնել թղթային՝ 5 օրինակից, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակներով,* *ե) ներկայացնել առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը,* *զ) ներկայացնել աշխատանքների կատարման ծավալաթերթը՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը պետք է ներառի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը,* *է) ծավալաթերթը ներկայացնել նաև տոկոսային արտահայտությամբ։*					

		Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն 2 մասից՝ *1. Ճարտարապետաշինարարական մաս, որը ներառում է՝ ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր, հատակագիծ, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, համապատասխան լիցենզիա՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառում՝ հիդրոտեխնիկական ոլորտով, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն՝ ըստ անհրաժեշտության, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի և կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ և բացատրագրեր։* *2. Նախահաշվային մաս, որը ներառում է՝ ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ։* *Աշխատանքային նախագծի իրականացման ընթացքը ենթակա է պատվիրատուի հետ համաձայնեցման։ Աշխատանքային նախագծի ամբողջական փաթեթը պետք է ներկայացվի հայերեն լեզվով։* *Ըստ անհրաժեշտության տեխնիկական պայմանների ստացումը պետք է կատարվի նախագծողի կողմից.* *Աշխատանքների ավարտից հետո ավարտական և շահագործման ակտերի էլեկտրոնային մուտքագրումները և աշխատանքների արդյունքի լիարժեք շահագործման թղթակցությունների վարումը պետք է իրականացվի պատվիրատուի և նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմող կազմակերպության փոխգործակցությամբ, այդ թվում պատվիրատուի հանձնարարությունների կատարումը՝ ավարտական փաստաթղթերի դրական արդյունքին հասնելու նպատակով.* *Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համապատասխան համակարգչային ծրագրերով, լինեն ընթեռնելի և կիրառելի։*					

		Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայության ձեռքբերումն իրականացնում է պատվիրատուն: *Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունը պատվիրատուի կողմից համարվում է ամբողջությամբ ընդունված, և դրա դիմաց վճարումները կատարվում են միայն փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:* *Հիմնական պարտականություններն են՝* *1. հետազոտական աշխատանքների իրականացում,* *2. նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:* *Հետազոտման վերաբերյալ պահանջներ՝* • *իրականացնել ինժեներաերկրաբանական հետազոտումներ,* • *ինժեներական հետազոտումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով, ինչպես նաև ГОСТ 32836-2014 և ГОСТ 33179-2014 ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան,* • *ինժեներաերկրաբանական հետազոտումն իրականացնել ГОСТ 32868-2014 ստանդարտի և Հայաստանի Հանրապետությունում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխան,* • *նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության պետական ստանդարտներին, հրահանգներին և քաղաքաշինական նորմերին,* • *նախագծով պետք է նախատեսվեն առնվազն տվյալ օբյեկտի իրականացման համար անհրաժեշտ բոլոր հիմնական աշխատանքները և տեխնիկական լուծումները:* *Համաձայնեցումների և նորմատիվ պահանջների մասով՝* • *քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,* • *նախագծային լուծումները պետք է համաձայնեցվեն տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կամ լիազորված անձի հետ,* • *տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ պետք է համաձայնեցվեն նաև շինարարական աղբի տեղերը,* • *նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան,*					

		• *նախահաշիվը պետք է կազմվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան,* • *պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N 19-Ն և 2009 թվականի ապրիլի 3-ի N 35-Ն հրամաններով հաստատված պահանջները,* • *պետք է ղեկավարվել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով,* • *պետք է ղեկավարվել նաև Հայաստանի Հանրապետության ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանի 7-րդ կետի պահանջներով՝ նկուղային հարկի վերազինման, քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցի նախատեսման, կամ գոյություն ունեցող նկուղային հատվածի հիմնանորոգման կամ վերակառուցման վերաբերյալ դրույթի մասով,* • *նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր համապատասխան նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:* *նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցումները այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ իրականացնում է նախագծողը:*					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք.Աբովյան, Բարեկամության հր.1
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102462232
ՀՎՀՀ 03561498
Համայնքի ղեկավար՝ Է. Բաբայան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթ Անհաղթ 23
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2052822265911001
ՀՎՀՀ 08427494
Տնօրեն՝ Է. Հոդաբաշյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

Արսեն Առուշանյանին
/հասցեն՝ maxxtig@gmail.com /

«13» 04 2026թ.

N ՎՋ/11333

Առարկան՝ Պարզաբանում դիմումի վերաբերյալ

Հարգելի պարոն Առուշանյան,

Ի պատասխան Ձեր 26.03.2026թ. դիմումի՝ հայտնում եմ, որ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Խաղաղության փողոց 3 հողամաս հասցեի 21.08.2024թ. թիվ ՎՋ3962/2024 տեխնիկական պայմանի ժամկետը երկարացվել է մինչև 10.12.2026թ.:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝
Լ. Բարեյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ, «ՎԵՈԼԻԱ ՋՐ [illegible]»
ԵԼԻՋ 11333
«13» 04 26թ.

ՀՀ, ք. Երևան,0025,Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan,0025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

VEOLIA

Ջուր

«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա.Մարտիրոսյան
«21» 08 2024թ.

Տեխնիկական պայման ՎՋ 3962 /2024

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման, նախագծման)

Մ. Կոտայք, ք. Աբովյան,
Խաղաղության փ. 3 հողամաս
/Տարածքի հասցե/

ՀՀ Կոտայքի Մարզի Աբովյան Համայնք
/Անուն, ազգանուն/

/Հեռախոսահամար/



422467

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հրդեհաշիջում
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	Տարածքի հարևանությամբ	Տարածքի հարևանությամբ	
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	d=110մմ, P=2.5 մքն. պ/էթ.	d=300մմ	
Միացման կետը	Տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից	Տարածքի հարևանությամբ անցնող կոյուղագծին	
Սիացման տրամագիծը	Համաձայն նախագծի		
Ջրաչափի տրամագիծը			
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Տես * կետը
Ջրամատակարարման գրաֆիկը	07.00-24.00		

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին :Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է նկարագրման միևչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ թիվ 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Տեխնիկական պայմանով տրամադրվում է միայն խմելու-տնտեսական պահանջներին համապատասխան ջրաքանակ՝ de20մմ խողովակով:

Տեխ. պայմանների մասնագետ՝ Հ.Սարգսյան

ENGINEERING & DESIGN

Հայաստանի Հանրապետություն
Ք. Երևան, Դավիթ Անհաղթ 23

№ ԷՀ-28
12.06.2026

Աբովյան համայնքի ղեկավար
պարոն Է. Բաբայանին

Հարգելի պարոն Բաբայան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Աբովյանի համայնքապետարանի և «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ-ի միջև կնքված **«ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-26/64»** ծածկագրով գնման պայմանագրի համաձայն «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ-ի կողմից մշակվում է «**Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու ջրամիացման, ջրահեռացման և հրդեհաշիջման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն**» աշխատանքային նախագիծը: Մրցութային փաստաթղթերի մշակման և աշխատանքային ծավալների գնահատման համար խնդրում ենք տրամադրել տվյալներ, վերոնշյալ հասցեում շինարարության ընթացքում առաջացած ավելցուկային գրունտների և շինարարական աղբի տեղափոխման համար նախատեսվող թափոնատեղիների հեռավորությունների վերաբերյալ:

Հարգանքով՝

«ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ տնօրեն Է. Հոդաբաշյան _____

Կ.Տ.

Ստորագրող
ԷՐԻԿ ՀՈԴԱԲԱՇՅԱՆ
1109981058

2026-06-12 13:53:02 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

18 հունիսի 2026 թ. N Ե-4015

«ԷՅՉ Ի ԷՅ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Է. ՀՈԴԱԲԱՇՅԱՆԻՆ

Ձեր՝ 12.06.2026թ. № ԷՀ-28
Մուտք՝ N- 12.06.2026թ. N S-1738

Հարգելի պարոն Հոդաբաշյան
Հայտնում եմ, որ նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս շինարարական աղբավայրի հեռավորությունը ընդունել 1 (մեկ) կիլոմետր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

Կապ. Կապիտալ աշխատանքների մշտադիտարկման պատասխանատու
Ա. Առուշանյան

«ԳԵՈԶՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տարածք՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԱԲՈՎՅԱՆ, ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՆԱԽԱԳԾՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱԳԾԻ ԵՎ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՈՒՂԵԳԾԵՐ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



Լիցենզիա ՔՊԼ-000308 Պատվիրատու՝ «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ

Ներդիր ՔՊՆ-000308-11

Տնօրեն՝ Դ. Ասատրյան

Ճարտարապետ-երկրաբան՝ Դ. Ասատրյան

Երևան – 2026

ՀՀ ք. Երևան, Բաշինջաղյան 169շ/44բն. ☏ (094) 400661 E-mail info@geozone.am /geozonedavit79@gmail.com/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լիցենզիա, ներդիր (նմուշի օրինակ)----------3

Բացատրական մաս----------6

Ներածություն----------6

1. Ընդհանուր տեղեկություններ----------7

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը----------9

3. Եզրակացություն----------10

4. Օգտագործված գրականության ցանկ----------11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000308, 1-ին դաս

(մկրտ. համարը, վերը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄ

(գործող հոգևոր միավորման անվանումը, որին տրվում է լիցենզիան)

ՏՐՎԱԾ Է

2024-08-23, «ԳԵՈՉՈՒՆ» ՍՊԸ

(լիցենզիան ստացողի անվանումը, ապա՝ հաշվառման գրանցման համարը)

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ Փ., 169, 44 ԲՆ.

(հասցեն՝ փոստային ինդեքսը, տարածքը, մարզը, բնակավայրը, փողոցը, տունը, բնակարանը կամ գրասենյակային տարածքի հասցեն)

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.

(տարի, ամիս, օր)

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, փ. Հրազդան, Գետափնյա փողոց 3 հասցեում

ՀԱՏՎԱԾ ՀԱՍԱՆ՝ UG56-35/9-8DC9-3CE6

Սույն փաստաթուղթը տրված է ոսկեգույնի էլեկտրոնային նշանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային քննիչակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական ծառայությունների վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով ինչպես համարը կամ սքանավորելով առաջ արծագանքման ծածկագիրը (QR Code)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000308-11

«ԳԵՈՋՈՆ» ՍՊԸ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, փ. Հրազդան, Գուրգեն Մահարու փողոց 3 հասցե

23.08.2024թ.

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՍԿՈՂ ՀԱՄԱՐ UGFA-424E-155A-2C7E

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային տեղեկանքի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման նամակագրի (QR Code)

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ԳԱՎԻԹ ԱՍԱՏՐՅԱՆ	<	000714	2024-07-09

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, փ. Հրազդանի, Դատարանական փողոց 3 հասցեում

ՀԱՍԻՀ ՀԱՄԱՐ՝ UGFA 424E 155A 2C7E
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել՝ https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում տեղադրելով սույն համարը կամ սքանավորելով աջակ տեղադրված նկարչափը (QR Code):

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Ներածություն

1.«ԳԵՈՋՈՆ» ՍՊԸ-ի կողմից Ճարտարագետ-երկրաբանի կոորդինացմամբ և ղեկավարմամբ, համապատասխան ՀՀՇՆ-1-2,01-99-ի, ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու նախագծվող արտաքին ջրագծի և կոյուղագծի ուղեգծերի ինժեներաերկրաբանական կառուցվածքի, գրունտների կարգերի պարզաբանման նպատակով իրականացվել են ճարտարագիտաերկրաբանական ուսումնասիրություններ:

2. Աշխատանքները իրականացվել են **«ԳԵՈՋՈՆ»** ՍՊԸ-ի կողմից **«ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ**-ի պատվերով: Աշխատանքների իրականացման նպատակն է, համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու նախագծվող արտաքին ջրագծի և կոյուղագծի ուղեգծերի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան եզրակացության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ճարտարագիտաերկրաբանական հետազոտություններ.

1. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:
2. Տեղադիտական հետազոտություններով վերհանել վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները, եթե դրանք առկա են (սողանք, քարաթափում, ճահճացում և այլ):
3. Գոյություն ունեցող փոսորակների խրամուղիների և տեղանքում արխիվային նյութերի միջոցով պարզաբանել գրունտների շերտերը և դրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը:
4. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը՝ կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:
5. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, դրանց ֆիզիկամեխանիկական

բնութագրերի ամփոփում:

6. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Տեղանքը՝ ըստ ՀՀՇՆ-1-2,01-99-ի ինժեներաերկրաբանական պայմանների, I-ին կարգի տեղամաս է:

Ուսումնասիրվող տարածքի տեղազննումը կատարվել է 2026 թվականի հունիս ամսին: Ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոսորակները, խրամուղիները, հարակից տարածքների բնական կտրվածքները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տեղանքի մանրամասն ուսումնասիրության և գոյություն ունեցող բնական բացվածքների, տեղանքում առկա կտրվածքների հիման վրա տվյալ տարածքում գրունտները պարզ են դարձել:

Ուսումնասիրվող տեղանքի գծագիր



1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրական տեսակետից տարածքը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից պատկանում է ցածր լեռներ, սարավանդներ և նախալեռներ (մինչև 1560մ) տիպերին՝ կուտակումային ծածկույթով մեղմաթեք նախալեռնային սարավանդներ են: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 1411.0 մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով: Ուսումնասիրվող տարածքը ներկայացված է վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները և դրանց խճաբեկորները, էլյուվիալ-դելյուվիալ նստվածքները կավավազների ավազակավերի տեսքով:



N_2ak-ap Верхний плиоцен. Акчагыл-апшерон. Долеритовые и оливиновые базальты, андезито-базальты, андезиты, андезито-дациты, частично туфобрекчии и туфы

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, հ.Աբովյանում, ուստի բերում ենք նրան մոտ համապատասխան կլիմայական ցուցանիշները: ՈՒսումնասիրվող տարածքին բնորոշ է «ՉԱՓԱՎՈՐ» կլիմայական շրջանում՝ տաք և խոնավ ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 22,1˚C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 65% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և չափավոր ցուրտ թույլ քամիներով ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -4,5˚C է, հարաբերական խոնավությունը 80% (ժ.15-ին), թույլ քամիները 3-5մ/վրկ արագությամբ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,8 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 20մ/վ է, 50 տարվա ընթացքում 23մ/վ:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ^2 է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ^2 է:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50կգու/մ^2 է: Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 35կգ/մ^2 է:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ուսումնասիրվող խորություններից ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ առկա բնական կտրվածքների, փոսորակների, նախկինում հորատման և արխիվային նյութերի տվյալների (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա), ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ 2 ինժեներաերկրաբանական (ԻԵՏ) տարրերը կամ շերտերը վերևից–ներքև.

ՈՒսումնասիրվող ուղեգծերի համար գրունտները տրվում են մինչև 3.0 մ խորությամբ (տես ստորև):

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու նախագծվող արտաքին ջրագծի և կոյուղագծի ուղեգծերի գրունտները տրվում են երկու շերտով:

Ջրագիծ ՆԿ0+00-ՆԿ0+18, կոյուղագիծ ՆԿ0+00-ՆԿ0+13

Շերտ1 0.0-0.2մ Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով,
(ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):
Ծավալային կշիռը՝ 1.9տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 300կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 12.IVբ կարգ է:

Շերտ2 0.2-3.0մ խճավազներ, խիճ ավազակավի կավավազի լցիչով:
Ծավալային կշիռը՝ համապատասխան կարգերի 2,0-2,2տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ համապատասխան կարգերի 400-500կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 80% 5.4) IV, 20% 5.5)V կարգ են:

3.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում ծովի մակարդակից տատանվում են՝ 1411.0 մետրի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 2 շերտով:
- Ուսումնասիրվող տեղամասում ուղեգծերով, որպես հիմնատակ գրունտները հուսալի են:
- Համաձայն ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,8 մետր:
- Գրունտային ջրերը գտնվում են խորը հորիզոններում:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը քարաթափությունը, ճահճացումը՝ բացակայում են:
- Ուսումնասիրվող տեղամասում փոսորակները կամ խրամուղիները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ հարկ լինելու դեպքում ինժեներ-երկրաբանի կողմից կատարել գրունտների ճշգրտում:

Ճարտարագետ-երկրաբան՝ Դ. Ասատրյան

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ГОСТ 25100-2020. Грунты. Классификация.
2. ՀՀՇՆ IV 10.01.01-2006 “ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ”
3. ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ-101 «**Բնահողերի և ապարների դասակարգում»**
4. ՀՀՇՆ 20-04.2020թ.-Երկրաշարժադիմացկուն շինարարություն
5. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար։ «Հիմնական դրույթներ»
6. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»
7. Геология АрмССР том 1 Геоморфология 1961г.

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԿՈՏՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Ցեմենտ	այո	30
Ավազ	այո	30
Խիճ	այո	30
Պողպատ	այո	30
Բիտում կամ բիտումա-պոլիմերային քսանյութեր	այո	5
Ներկանյութեր	այո	5

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հոդաբաշյան

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Վերակառուցվող կամ նոր կառուցվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի	Աղբյուրը և նորմատիվը
Հավաքովի ե/բ օղակներով դիտահորեր	35-40	ըստ գրականության
Պոլիէթիլենե խողովակներ	75-80	ըստ արտադրող ընկերությունների տրված տեխնիկական բնութագրերի

Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վրա

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հոդաբաշյան

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Օբյեկտի նախատեսված աշխատանքները իրականացնող կապալառու կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ

Մրցույթում հաղթող Կապալառու կազմակերպությունը պարտավոր է 1 տարի երաշխիքային ժամկետում վերացնել իր կողմից կատարված աշխատանքներում, շինարարական գործնթացից առաջացած բոլոր թերությունները:

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հոդաբաշյան

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՅԳՈՒ ՋՐԱՄԻԱՑՄԱՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաներ

Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
Ջրամատակարում և ջրահեռացում (Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա)

‹‹ԷՅՉ-Ի-ԷՅ›› ՍՊԸ

տնօրեն՝ Է. Հոդաբաշյան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աբովյանի համայնքապետարանի պատվերով «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊ ընկերության կողմից № ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-26/64 պայմանագրի շրջանակներում մշակվել է «Աբովյան համայնքի կարիքների համար Աբովյան քաղաքի խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու ջրամիացման ջրահեռացման և հրդեհաշիջման համակարգերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ» աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ): ԱՆ-ի մշակման համար հիմք են հանդիսացել Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական և ճարտարապետահատակագծային առաջադրանքները, «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված ՎՋ 3962/2024 տեխնիկական պայմանը, տեղում մեր մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությունները և Աբովյանի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման ինչպես նաև շահագործող և այլ շահագրգիռ կողմերի հետ կայացած քննարկումները և դրանց արդյունքում կայացված որոշումները:

ԱՆ-ի շրջանակներում մշակվել է Աբովյան քաղաքի նոր կառուցվող քաղաքային այգու արտաքին ջրագծի, կոյուղագծի և հակահրդեհային հիդրանտի կառուցման աշխատանքային գծագրերը (տես գծագրական մաս Բաժին-ՋՋ), ինչպես նաև համապատասխան աշխատանքային ծավալները:

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 2 գրքեր՝

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ գծագրական մաս և ծավալաթերթ

Գիրք 2 - Նախահաշիվ:

Ընդհանուր դրույթներ գծագրական մաս և ծավալաթերթ - Գիրք 1-ով ներկայացված են ԱՆ-ի համար հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերը, մասնագիտական եզրակացությունները, ԱՆ-ի բացատրագիրը, երկրաբանական եզրակացության հաշվետվությունը, աշխատանքների կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությունը, առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկը, ըստ պահանջվող քանակի, առաջարկվող աշխատակազմի ցանկը, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումները, համապատասխան բաժինների մանրամասն աշխատանքային ծավալների նկարագրությունը իրենց քանակներով: և այլն:

Նախահաշիվ – Գիրք 2-ով ներկայացված են աշխատանքային ծավալների մանրամասն նախահաշիվները:

Նախագծվող ջրագիծը համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի, միանում է տարածքի հարևանությամբ անցնող Ø110մմ տրամագծով 2.50 մթն. ճնշմամբ պոլիէթիլենե ջրագծից:

Միացման կետում նախատեսված է D=1.50մ տրամագծով, H=1.80մ բանվորական բարձրությամբ ե/բ հավաքովի օղակներով հակահրդեհային հիդրանտի և

համատեղ փականային հորի կառուցում, մոնտաժելով D=100մմ տրամագծով և H=0.75 մ բարձրությամբ ստորգետնյա տեղադրման հակահրդեհային հիդրանտ:
(Որպես օրինակ նախագծում նախատեսված է մոսկովյան տիպի ստորգետնյա տեղադրման հակահրդեհային հիդրանտ):

Նախագծվող ջրագիծը նախատեսված է իրականացնել L=18.0 մ ընդհանուր երկարությամբ DN20(HDPE) պոլիէթիլենե խողովակներով, ջրաչափական հորը իրականացվելու է ուղղանկյուն պոլիմերավազային հորով, մոնտաժելով DN15 մմ տրամագծի (C դասի) ջրաչափ, որը իր միացումների հետ միասին համաձայն ‹‹Վեոլիա Ջուր›› ՓԲ ընկերության տեղամասային ներկայացուցչի հետ կայացրած որոշման՝ տրամադրվելու է շահագործող կազմակերպության կողմից:

Նախագծվող կոյուղագիծը համաձայն ‹‹Վեոլիա Ջուր›› ՓԲ ընկերության կողմից տրված միացման տեխնիկական պայմանի, միանում է տարածքի հարևանությամբ անցնող Ø300մմ տրամագծով կոյուղու կոլեկտորին:
Նախագծով նախատեսված L=13.0 մ ընդհանուր երկարությամբ DN200(GF),SN8 տիպի լայնուկավոր ակոսավոր խողովակներով կոյուղագծի կառուցում:
Սահմանազատման կետում նախատեսված է D=1.0մ տրամագծով, H=1.20մ աշխատանքային բարձրությամբ ե/բ հավաքովի օղակներով դիտահորի կառուցում, իսկ միացման կետում միացումը իրականացվելու է գոյություն ունեցող դիտահորին:
Դիտահորերի փաստացի և բանվորական բարձրությունները տես գծագրական մասում:
Սույն աշխատանքային նախագծի շրջանակներում մշակվող խրամուղիների և փոսորակների վերականգնվող ծածկույթի տեսակը իրականացվելու է գոյություն ունեցողին համապատասխան:

Նախագծվող խողովակների և գոյություն ունեցող այլ ստորգետնյա կոմունիկացիաների միջև հնարավոր են փոխհատումներ, շինարարության ընթացքում փոխհատվող հանգույցներում անհրաժեշտության դեպքում պետք է տրվեն համապատասխան լուծումներ:

Նախագծող խողովակների և գոյություն ունեցող ստորգետնյա կոմունիկացիաների հնարավոր փոխհատումների դեպքում, (որոնք ի հայտ կգան շին. աշխատանքների ժամանակ) եթե ջրագիծը անցնում է կոյուղագծի տակով, անհրաժեշտ է ջրագծի վրա նախատեսել պատյան խողովակ, իսկ եթե ջրագիծը անցնում է կոյուղագծի վրայով և խողովակների պատերի միջև հեռավորությունը չի գերազանցում 0.4մ-ը, այս դեպքում ջրագծերի վրա նույնպես նախատեսվում է պատյան խողովակների իրականացում:

Հարկ ենք համարում նշել, որ լրացուցիչ խնդիրներից խուսափելու նպատակով, հողային աշխատանքների իրականացման ընթացքում, Կապալառուն պարտադիր պետք է շինհրապարակ հրավիրի նաև ստորգետնյա

կոմունիկացիաները շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչներին, տեղում կոմունիկացիաների տեղերը հստակեցնելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Սույն նախագծով նախատեսված է իրականացնել Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քազաքային այգու ջրամիացման, ջրահեռացման և հրդեհաշիջման համակարգի կառուցման աշխատանքները:

1.1 Նպատակները և աշխատանքների ամփոփագիրը

